այդ մասին, որ խիստ արժէքաւոր են մեր երկրի բնապատմութեան ուսումնասիրութեան տեսակէտից:

Այդ մարդի մէջ Վագներ իր նախորդների թւում առանձնապէս յիշատակելի է համարում «լաւագոյն հին բուսահաւաք» Tournefort-ի դիրքը:

«Թէեւ ես,— շարունակում է նա,— նրան համարում եմ արեւելքի մասին մեր ունեցած ամենաանվստահելի, մակերեւութական եւ անճիշտ աղբիւրներից մէկը»:

Վագների կարծիքով՝ Թուրնէֆոր յաճախ դիտմամբ է անճշդութիւններ գրում, թերեւս իր ընթերցողների հետաքրքրութիւնը աւելի շարժելու համար: Այդպիսի անճիշդ տեղեկութիւնների թուին է պատկանում, օրինակ, ասում է Վագներ, եւ այն, որ իբր թէ Մասիսի վրայ վագրեր կան, այն ինչ «ոչ այստեղ, ոչ էլ ողջ Առաջաւոր Ասիայում վագրի հետք չկայ... Գիշատիչ գազանները չեն էլ կարող այնտեղ ամենափոքր սնունդ անդամ |ճարել: Եւ առհասարակ՝ կենդանական աշխարհը Մասիսի վրայ չափազանց աղքատ է»:

Լերան ստորոտում բնապատմական արշաւներ կատարելուց յետոյ Վագներ իր քննական ուսումնասիրութիւնները տեղափոխում է վեր, Ս. Յակոբու ձորը, դաշտից 2500 ոտք բարձր, ոչ հեռու 1840-ի երկրաշարժից կործանուած Ակոռիի եւ Ս. Յակոբի վանքի տեղից:

Մի քանի օր Վագներ մնում է այդ ձորում եւ բազմաթիւ շրջագայութիւններ անում գիտական նպատակով: Մեր Արովեանը ի հարկէ նորէն իր հետ է:

Վագներ ընդարձակ էջեր է նուիրում Մասիսի հրաբխային ժայթքումին 1840 թ., որից հիմնովին կործանուեցին Ակոռին եւ Ս. Յակոբը: «Դա յիշեցնում է Պոմպէյը եւ Հերքուլանումը»,— ասում է հեղինակը: Եւ սակայն դէպքի պատճառների մասին ռուս պաշտօնական եւ այլ աղբիւրները ճշգրիտ, սպառիչ տեղեկութիւններ տուած չեն եղել:

Վագներ հարցուփորձի է ենթարկում ոմանց Ակոռիի այն սակաւաթիւ ականատես բնակիչներից, որոնք գիւղից դուրս ելած լինելով՝ զոհ չեն դնացել բնութեան սոսկալի պատահարին: Դրանց թւում է եղել եւ Ակոռի գիւղացի Սաղաթէլ Խօջայեվը, «մի յարգարժան ծերունի, եղբայրը այն Ստեփան աղայի, որին Պարրոտը եւ Դիւբուան յաճախ յիշատակում են, եւ որը իր մերձաւորների հետ զոհ է դնացել աղէտին»:

Սաղաթէլը աղէտի օրը դնացած է լինում Ակոռիի արօտավայրերը, գիւղից վեր: Այդտեղ նա հազիւ երկու վերստ հեռու է դտնուելիս եղել այն տեղից, ուսկից ժայթքել սկսել են գոլորշի եւ քարի ու հողի զանգուածներ: Այսպիսով վերջիններս ոչ թէ, ինչպէս տարածուած անհիմն կարծիք է եղել, սարի կատարից են վար թափուել, այլ՝ գազերի եւ գոլորշիների միջոցով Ս. Յակոբու ձորի խորքից են դուրս ժայթքել ահաւնազդորդ ուժով, այսինքն՝ հէնց Մասիսի հին խառնարաններից մէկից:

Ուրեմն 1840-ի բնական պատահարը հրաբխային ժայթքումն է եղել՝ միացած երկրաշարժի հետ: Սաղաթէլի պատմածները հաստատել են Ակոռիցի երկու ուրիշ ականատեսներ, որոնք եւս Վ. որպէս առաջնորդներ իր հետ առած է եղել:

«Ես բախտաւոր էի,— ասում է Վանգեր,— որ թարգման ունէի իմ ուղեկից Արովեանի նման կրթուած, լեզուին լաւ տեղեակ մի անձնաւորութիւն»:

Վագներ ամենայն մանրամասնութեամբ առաջ է բերում ականատեսների վկայութիւնները Մասիսի ժայթքումի մասին, որ տեղի է ունեցել 1840 թ. յուլիս 2-ին (հին տոմարով) ու տեւել մէկ ամբողջ ժամ:

Ակոռին, ասում է Վագներ, Երեւանի շրջանի ամենամեծ եւ ամենահարուստ գիւղն է եղած ժամանակին, Արագածի լանջին գտնուող Բազարջըկին համահաւասար: Գիւղի 1500 բնակիչներից եւ 400-ից աւելի քիւրդ մշակներից հազիւ 114 հոգի ազատուել են, կամ գիւղի շրջակայքում եւ կամ գործով ուրիշ տեղ գըտնուած լինելու շնորհիւ:

Վագներ այցելում է նաեւ Ս. Յակոբի վանքի տեղը ու երկրաբանական հետազօտութիւններ կատարում:

Ս. Արովեան եւս իր կողմից հաստատում է, որ Մասիսի երեք կատարներն էլ անփոփոխ նոյն տեսքն ունին այժմ, ինչ որ 1829-ին, երբ նա Պարրոտի հետ միասին բարձրացել է լերան միջին կատարը: Սաղաթէլը շարունակ կրկնում